

<<ՎԱՆԱԶՈՐԻ ՀՈՎՀ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ>>

ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ

ՎՊՀ ՌԵԿՏՈՐ

Գ.Կ. ԽԱԶԱՏՐՅԱՆ

<<____>> _____ 2015թ.

ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ

ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ

Ընդունված է գիտական խորհրդի նիստում

Արձանագրություն թիվ 2

<<27>> _____ 02 _____ 2015թ.

Վանաձոր- 2015

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԿԾ-ի աուդիտի ընթացակարգի մշակման և կազմակերպման խումբ.....	2
ՄԿԾ-ի աուդիտի կազմակերպման և անցկացման խումբ	3
Ընդհանուր դրույթներ	3
2.ՄԿԾ-ի աուդիտի կազմակերպման նպատակը.....	4
3. ՄԿԾ-ի աուդիտի կազմակերպման խնդիրները.	5
4.ՄԿԾ-ի աուդիտի նախապատրաստական աշխատանքներ.....	5
5.ՄԿԾ-ի աուդիտի կազմակերպման գործողությունները.	6
6.ՄԿԾ-ի աուդիտի անցկացման ընթացակարգ.....	7
7.Ներքին աուդիտի գործիքները.....	8
8.Աուդիտի անցկացման նկարագրություն և գրաֆիկական նկարագրություն	10
9.Աուդիտորական խմբի պարտականությունները	11
Աուդիտի չափանիշերը.....	12
Չափանիշ 1. Ծրագրի նպատակը.....	12
Չափանիշ 2. ԿԾ-ի բովանդակությունը.....	12
Չափանիշ 3 Ուսանողները և կրթական գործընթացը.....	13
Չափանիշ 4. Պրոֆեսորադասախոսական անձնակազմ.....	14
Չափանիշ 5. Մասնագիտական գործունեության նախապատրաստում	15
Չափանիշ 6. Նյութատեխնիկական բազա	16
Չափանիշ 7. Տեղեկատվական ապահովվածություն.....	16
Հավելված 1 Ներքին աուդիտի անցկացման ծրագիր.....	17
Հավելված 2 Որակի կամակարգի ներքին աուդիտի պլան	18
Հավելված 3 Անհամապատասխանությունների արձանագրություն N__	19
Հրահանգներ հաշվետվության ձևի լրացման վերաբերյալ.....	20
Չափանիշների նախնական գնահատում (Ինքնագնահատման զեկույցի հիման վրա)	21
ուսումնական պլանի վերլուծություն.....	22
Աուդիտի խմբի անդամի աշխատանքային թերթիկ	24
ԿԾ-ի որակի կառավարման իրականացման աստիճանը	27
Գործատուի ներկայացուցչի աշխատաթերթ.....	28
Ծրագրի վերջնական գնահատման ձևը	30

Պաշտոնը	Ա.Ա.Հ / ստորագրություն	ամսաթիվ

Աուդիտի գործընթացի ղեկավար _____

ՄԿԾ-ի աուդիտի կազմակերպման և անցկացման խումբ

ՄԿԾ _____

_____ աուդիտի պատասխանատու

	Աուդիտորներ	Պաշտոնը

1.1. Ընդունելով Բոլոնյան գործընթացի հիմնարար սկզբունքները՝ մուհը փորձում է ստարածաշրջանում առաջնորդվել դրանցով և նպաստել մասնագիտացումների փոխձանաչման համակարգի ստեղծմանը:

Համաձայն ԿԾ-ի որակին ներկայացվող Բոլոնյան գործընթացի պահանջների՝ յուրաքանչյուր ծրագիր պետք է համապատասխանի հասարակության և աշխատաշուկայի պահանջներին, ընդունվի հանրության կողմից, ունենա բավականաչափ թափանցիկ կառուցվածք, որը թույլ կտա համադրել այն այլ մուհերի ծրագրերի հետ՝ դրանով ապահովելով ուսանողների շարժունությունը և այլ երկրներում ուսուցման արդյունքների ձանաչումը: ԿԾ-ն նաև պետք է լինի մատչելի, հասկանալի, ընդունելի և գրավիչ ուսանողների համար:

1.2. Սույն ընթացակարգով սահմանվում է ՎՊՀ-ի ԿԾ-ի աուդիտի անցկացման կարգը, որը բխում է մուհի և ՈԱԿ-ի աուդիտի կանոնակարգից և ընթացակարգից:

1.3 Աուդիտի անցկացման հիմքում դրված են ՄԿԾ-ի որակի ապահովման չափանիշերը:

1.4. Սույն ընթացակարգում գործածվում են հետևյալ հապավումները.

ՄԿԾ- մասնագիտության կրթական ծրագիր,

ԿԾ – կրթական ծրագիր,

ՈԱՇ- որակավորումների ազգային շրջանակ,

ՈԱ- որակի ապահովում,

ՈԱԿ- որակի ապահովման կենտրոն,

ECTS – European Credit Transfer and Accumulation System:

Կրեդիտների փոխանակման և կուտակման եվրոպական համակարգ

2.ՄԿԾ-ի աուդիտի կազմակերպման նպատակը .

2.1. ներբուհական կրթության որակի ապահովման արդյունավետ համակարգի նախագծման և ներդրման ռիսկերի բացահայտում կրթության որակի վերահսկման միջոցով,

2.2. ԿԾ-ների ներքին ստուգումներ իրականացնում,

2.3. վերլուծությունների հիման վրա ուսանողների մասնագիտական պատրաստվածության որակի բացահայտման փորձաքննության անցկացում,

2.4. տվյալ մասնագիտությունների գծով շրջանավարտների իմացության մակարդակից

գործատուի բավարարվածության աստիճանի բացահայտում:

3. ՄԿԾ-ի աուդիտի կազմակերպման խնդիրներն են.

- 3.1. բացահայտել ԿԾ-ի որակի վերահսկման և ապահովման հնարավոր ռիսկերը,
- 3.2. տրամադրել ԿԾ-ն իրականացնող աշխատակազմին առաջարկություններ և երաշխիքներ կրթության որակի բարձրացման նպատակով,
- 3.3. առաջավոր փորձի փոխանակման նպատակով բացահայտել ԿԾ-ի իրականացման գործում համագործակցային դաշտում (տեղական և միջազգային) կողմերի մասնակցության աստիճանը:

4. ՄԿԾ-ի աուդիտի նախապատրաստական աշխատանքները.

ՄԿԾ-ի աուդիտի կազմակերպման աշխատանքների հիմքում ընկած է մուհում ընդունված ՄԿԾ-ների մշակման քաղաքականությունը, որն անցկացվում է հետևյալ կերպ.

- 4.1. ՄԿԾ-ի մշակման գործում որակի ապահովման համակարգի ներդրում թյունի նգ-մեթոդաբանությամբ,
- 4.2. ՄԿԾ-ի պլանավորման, մշակման և իրականացման մոնիթորինգի փաստաթղթերի պատրաստում,
- 4.3. ՄԿԾ-ով մասնագետների պատրաստման անհրաժեշտության հիմնավորում,
- 4.4. ԿԾ-ի մշակման և որակի ապահովման գործընթացներում շահակից կողմերի ներգրավում,
- 4.5. մուհի դասախոսների համար կլոր սեղանների, խորհրդատվությունների, սեմինարների անցկացում՝ նորարարական մոտեցումների վերաբերյալ իրազեկվածության մակարդակի բարձրացման նպատակով,
- 4.6. մագիստրատուրայի, բակալավրիատի ուսանողների և շրջանավարտների ներգրավում մասնագիտության կրթական ծրագրերի մշակման և որակի ապահովման գործընթացներում,
- 4.7. անհրաժեշտ ռեսուրսների նկարագրություն (դասախոսական կազմ, ենթակառուցվածքներ, տեղեկատվական ռեսուրսների որակ և քանակ, նյութատեխնիկական բազա),
- 4.8. բոլոր մասնագիտություններին համապատասխանող ընդհանուր, միջանձնային, համակարգային և առարկայական կոմպետենցիաների մշակում,

4.9. առանձին մոդուլների վերջնարդյունքների գնահատման շեմային չափանիշերի մշակում՝ արտահայտված կրեդիտային միավորներով,

4.10. դասընթացային առանձին մոդուլներից ուսանողների ձեռքբերած կրթական արդյունքների գնահատման առավելագույն արդյունավետ մոդելների մշակում,

4.11. ՄԿԾ-ում նորարարական տեխնոլոգիաների մշակում և ներդրում,

4.12. ուսանողների ձեռքբերումների գնահատման ձևերի մշակում և ներդրում,

4.13 ՄԿԾ-ի մոնիթորինգի, գնահատման և վերանայման պարբերականության ընթացակարգերի որոշում,

4.14 թյունինգ-մեթոդաբանությանը համապատասխանող առանձին մասնագիտությունների կրթական ծրագրերի կազմում՝ ըստ հետևյալ սխեմայի.

- ծրագրի ուղղվածությունը (նպատակը, խնդիրները) և նկարագրությունը,
- ծրագրի վերջնական արդյունքները՝ ընդհանուր և բուն մասնագիտական կոմպետենցիաների տեսքով,
- բակալավրների և մագիստրանտների միջանկյալ և վերջնական ձեռքբերումների գնահատման մեթոդները,
- որակի վերահսկման ապահովման մեխանիզմները:

4.15. ԿԾ-ի մշակման ընթացքի և յուրաքանչյուր փուլի արդյունքների քննարկում՝ համապատասխան ամբիոնների, ֆակուլտետների խորհուրդների, ՎՊՀ-ի գիտական խորհրդի նիստերին,

4.16. ուսումնամեթոդական փաթեթի մշակում՝ ներառյալ ECTS կրեդիտային համակարգի հիման վրա կազմված ուսումնական պլանները՝ բոլոր դասընթացների/մոդուլների համար վերջնական արդյունքների/կոմպետենցիաների հստակ շարադրմամբ,

4.17. մշակված ԿԾ-ի և ուսումնամեթոդական փաթեթների ներքին և արտաքին փորձաքննություն, անցկացում:

5. ՄԿԾ-ի աուդիտի կազմակերպման գործողությունները.

5.1. ՄԿԾ-ի աուդիտի կազմակերպմանն առնչվող խնդիրների լուծման նպատակով անհրաժեշտ է կատարել հետևյալ գործողությունները.

- մասնագիտական կրթական ծրագրերի նախագծում և մշակում,
- ուսանողների ընդունելություն,

- կրթական ծրագրերի իրականացում (հիմնական և կամընտրական),
- ուսանողների հետ տարաբնույթ (ներառյալ դաստիարակչական) աշխատանքների իրականացում,
- բարձր որակավորում ունեցող պրոֆեսորադասախոսական անձնակազմի վերապատրաստում,
- գիտահետազոտական գործունեություն,
- աշխատակազմի կառավարում,
- կրթական միջավայրի կառավարում,
- հասարակական հաշվետվողականություն,
- տեղեկատվական (ներառյալ գրադարանային) ռեսուրսների տրամադրում:

6.ՄԿԾ-ի աուդիտի անցկացման ընթացակարգը.

6.1.նախապատրաստում.

- ✓ աուդիտորային խմբի ղեկավարի նշանակում,
- ✓ աուդիտորային խմբի անդամների նշանակում և նրանց պարտականությունների որոշում,
- ✓ ՄԿԾ-ի աուդիտի փաթեթի մշակում, որն ընդգրկում է աուդիտի խնդիրները, նպատակը և չափորոշիչները,
- ✓ նախորդ աուդիտի կատարած աշխատանքների ստուգում և նրա շտկողական գործողությունների կատարում (առկայության դեպքում),
- ✓ ՄԿԾ-ի ստորաբաժանումների հետ պլանի քննարկվում և համակարգում, հանձնախմբի անդամների և ժամկետների որոշում,
- ✓ ՄԿԾ-ի աուդիտի հաստատում ստուգումից առնվազն 7 օր առաջ,
- ✓ աուդիտի խմբի մասնակիցներին անհրաժեշտ փաստաթղթերով ապահովում,

6.2. աուդիտի խմբի ժողովի անցկացում, որի ընթացքում քննարկվում է աշխատանքային պլանը և ամփոփվում իրականացված աշխատանքները:

6.3. տեղեկատվության հավաքագրում և ստուգում, որն իր մեջ ներառում է ԿԾ-ի շրջանակում տվյալ մասնագիտության համար անհրաժեշտ բոլոր փաստաթղթերի ստուգում,

6.4. ստորաբաժանման գործունեության համապատասխանություն (ստուգում) այն պահանջներին, որոնք ամրագրված են որակի ապահովման փաստաթղթերում,

6.5. ասանձնակազմի համապատասխանության ստուգում:

Այս փուլում գրանցվում են ստուգումների տվյալները.

- աուդիտորական խմբի կողմից աուդիտի արդյունքների վերաբերյալ եզրակացության պատրաստում, որը հետագայում անցկացվում է «Աուդիտի հաշվետվության» մեջ: Աուդիտի եզրակացության ձևակերպման ժամանակ արձանագրվում է, թե նախատեսված պլանի համաձայն՝ աուդիտի նպատակը կատարվել է, թե՞ ոչ:
- եզրափակիչ խորհրդակցության անցկացում, որտեղ ստուգվող ստորաբաժանումների ղեկավարներին են ներկայացվում աուդիտի տվյալները և աուդիտի արդյունքների մասին եզրակացությունը:

6.6. աուդիտի հաշվետվության պատրաստում, հաստատում և ուղարկում:

Աուդիտի հաշվետվությունը պետք է պարունակի.

1. աուդիտի նպատակ,
2. աուդիտի ծավալը (աուդիտի շրջանակը և ժամկետները),
3. տեղեկություններ աուդիտորական խմբի ղեկավարի և կազմի մասին,
4. աուդիտի չափորոշիչները,
5. աուդիտի դիտարկումները,
6. եզրակացություններ աուդիտի արդյունքների վերաբերյալ,
7. բարելավմանն ուղղված առաջարկություններ,
8. աուդիտի հաշվետվություն (որը պետք է ներկայացվի գիտխորհրդին):

6.7. Աուդիտի անցկացումից հետո 2 շաբաթվա ընթացքում աուդիտորական խմբի ղեկավարը ռեկտորին է ուղարկում հաշվետվությունը՝ հաստատման և պահպանման համար: Աուդիտի հաշվետվության կրկնօրինակներն ուղարկվում են բոլոր ստուգում անցած ստորաբաժանումներին:

6.8. «Աուդիտի հաշվետվությունը» ստանալուց հետո ստորաբաժանումների ղեկավարները պարտավոր են համապատասխան քայլեր ձեռնարկել անհամապատասխանությունների շտկման և վերացման ուղղությամբ՝ համաձայն գործընթացի, ինչպես նաև հաշվի առնեն գործընթացի բարելավմանն ուղղված առաջարկությունները:

7.Ներքին աուդիտի գործիքները

Որակի ապահովման փաստաթղթերի ստուգում (համարժեքության աուդիտ)

7.1. Որակի ապահովման փաստաթղթերի ստուգումն իրականացվում է աուդիտի ծրագրի և պլանի համաձայն:

7.2. Որակի ապահովման փաստաթուղթերը պետք է բավարարեն մուհի գործավարության և փաստաթղթավորման ընդունված ընթացակարգի պահանջները:

7.3. Համարժեքության աուդիտի ժամանակ փաստաթղթերի ստուգումն իրականացվում է հետևյալ կերպ.

- փաստաթղթերի կոմպլեկտավորում և ամբողջության ստուգում,
- փաստաթղթերի արտաքին տեսք,
- համապատասխանություն փաստաթղթերի ձևավորման նախատեսված կանոններին,
- փաստաթղթեր կազմողների, ստուգողների, համաձայնեցնողների և հաստատողների ստորագրություն, կողավորում, ամսաթիվ և պաշտոն,
- հասկացությունների և ձևակերպումների ճշգրիտ և միանշանակ կիրառում,
- տարբեր գործողությունների ժամանակ շարունակականության ապահովում,
- գործողության նկարագրում մանրակրկիտ կերպով,
- որակի ապահովման գործողության համար անհրաժեշտ պայմաններ:

7.4. Աուդիտորների կողմից բացահայտված անհամապատասխանությունները գրանցվում են արձանագրություններում:

7.5. Աուդիտի ավարտից հետո աուդիտի խմբի ղեկավարի կողմից կազմվում է հաշվետվություն, որը ներառում է ամբողջական, ճշգրիտ և միանշանակ հասկացվող տեղեկատվություն աուդիտի անցկացման վերաբերյալ: Այդ հաշվետվությունը իրենից ներկայացնում է որակին առնչվող ամբողջական գրանցում, որն անհրաժեշտաբար ներառում է որակի ապահովման գնահատման և նրա բարելավմանն ուղղված որոշումների ընդունում:

7.6. Ներքին աուդիտի վերաբերյալ հաշվետվությունները և այլ փաստաթղթեր պահպանվում են 3 տարվա ընթացքում, իսկ հետո փոխանցվում են պահոց (արխիվ):

7.7. Ներքին աուդիտորները չեն կարող ստուգել իրենց գործունեությունը:

7.8. ՄԿԾ-ի աուդիտը կարող է անցկացնել մեկ աուդիտի մասնագետ կամ մասնագետների խումբ: Այդ դեպքում աուդիտի մասնագետների ղեկավար է հանդիսանում գլխավոր աուդիտորը:

7.9. Ներքին աուդիտի մասնագետից պահանջվող ընդհանուր պահանջներ.

- բարձրագույն կրթության առկայություն և աշխատանքային փորձ 3 տարուց ոչ պակաս,
- ներքին աուդիտի անցկացման հատուկ նախապատրաստում:
- ոլորտի նորմատիվ փաստաթղթերի պահանջների իմացություն՝ ըստ կազմակերպության ներքին աուդիտի մասնագետների սկզբունքների և մեթոդների,
- անձնական, հաղորդակցային շփումներ հաստատելու ունակություն, հավասարակշռվածություն, ինքնատիրապետման կարողություն,
- անաչառություն, վերլուծաբար և ճկուն մտածելու կարողություն, նպատակասլացություն,
- սեփական մտքերը բանավոր ու գրավոր արտահայտելու կարողություն, տակտի գզացողություն և աշխատասիրություն:

7.10. Ներքին աուդիտի մասնագետները պետք է պատասխանատվությամբ վերաբերվեն տեղեկատվության գաղտնիությունը:

7.11 Ներքին աուդիտի մասնագետը պատասխանատվություն է կրում իր գործունեության շրջանակներում աուդիտի պլանավորման, ներքին աուդիտի տեղեկատվության հավաստիության և անաչառության համար:

8.Աուդիտի անցկացման նկարագրություն և գրաֆիկական նկարագրություն.

8.1. Որակի հարցերի լիազոր պատասխանատուն (որակի կենտրոնի ղեկավարը) մշակում և հաստատում է ներքին աուդիտի մասնագետների ծրագիրը հաստատության ղեկավարի մոտ:

Ներքին աուդիտի ծրագրի մշակման ժամանակ հաշվի է առնվում հետևյալը. շահառուների պահանջները կրթական հաստատության թողարկած մասնագետի նկատմամբ, ինչպես նաև հաստատության ստորաբաժանումների դիտարկումներն ու առաջարկությունները:

8.2. Աուդիտի մասնագետի և աուդիտի մասնագետների փաստաթղթավորման գործընթացի հիման վրա մշակվում և հաստատվում են աուդիտի կազմակերպման և իրականացման պլանը և չափորոշիչները:

8.3. Աուդիտի գործընթացի սկզբում մասնագետների խմբի ղեկավարն անցկացնում է ծանոթագրական նիստ, որին մասնակցում են ԿԾ-ի աուդիտորները, ղեկավարը և ստուգվող ստորաբաժանումների ներկայացուցիչներ:

Աուդիտի մասնագետների ղեկավարը ներկաներին ծանոթացնում է աուդիտի ծրագրին և պլանին:

8.4. Աուդիտորներն իրականացնում են տեղեկատվության հավաստագրումն ու ստուգումը՝ համաձայն աուդիտի ծրագրի, նպատակների և խնդիրների:

Աշխատանքի արդյունքներն անցկացվում են բացահայտված անհամապատասխանությունների արձանագրության մեջ (հավելված):

8.5. Աուդիտորների ղեկավարը պատրաստում է հաշվետվություն աուդիտի արդյունքների վերաբերյալ: Հաշվետվության պատրաստման գործընթացում օգտագործվում են աուդիտի մասնագետների աշխատանքային նյութեր (այն է՝ ստուգման ցուցակներ, անհամապատասխանությունների արձանագրություններ, հաշվետվությանն առնչվող առաջարկություններ և այլն):

8.6. Աուդիտի ավարտից և հաշվետվության կազմումից հետո անցկացվում է աուդիտի մասնագետների ամփոփիչ նիստ, որի ժամանակ աուդիտի արդյունքները ներկայացվում են ստուգվող ստարաբաժանման ղեկավարին:

8.7. Որակի ապահովման պատասխանատուն (կենտրոնի ղեկավարը) կազմակերպում է աուդիտի արդյունքների քննարկում, հաստատում, ներքին աուդիտի հաշվետվության պահպանում և ներկայացում պատասխանատու անձանց ու ստորաբաժանումները՝ համաձայն համապատասխան ցուցակի:

8.8. Համաձայն աուդիտի արդյունքների վերաբերյալ ընդունված որոշումների՝ ստուգվող ստորաբաժանման ղեկավարը կազմակերպում է հետևյալ աշխատաքները.

- շտկում է անհամապատասխանությունները,
- ընթացք է տալիս զգուշացման գործողություններին,
- տալիս է աշխատանքի բարելավմանն առնչվող երաշխավորություն:

Իրականացված աշխատանքների արդյունքները փաստաթղթավորվում և ներկայացվում են որակի ապահովման կենտրոնին հաստատված ժամանակահատվածում:

9. Աուդիտորական խմբի պարտականությունները

9.1. ՈԱԿ-ի ղեկավարը հանդիսանում է գործընթացի նախապատրաստման, մշակման, կազմակերպման և ներդրման պատասխանատու:

9.2. ՈԱԿ-ի աուդիտի պատասխանատուներն իրականացնում են ՄԿԾ-ի աուդիտի նախապատրաստման, կազմակերպման և իրականացման աշխատանքներ:

9.3. ՈԱԿ-ի անձնակազմը մասնակցում է ՄԿԾ-ի աուդիտի կազմակերպման և իրականացման աշխատանքներին:

9.4. Աուդիտորական խումբը կազմվում և համալրվում է հաստատության մասնագիտական բարձր որակավորում ունեցող աշխատակիցներով, ուսանողներով և գործատուներով, որը հաստատվում է ռեկտորի կողմից: Խմբի ղեկավարն ընտրվում է աուդիտորական խմբի անդամներից:

Աուդիտի չափանիշերը

Չափանիշ 1. Ծրագրի նպատակը

1.1 Կրթական ծրագիրը պետք է ունենա.

1.1.1. Հստակ ձևակերպված և փաստաթղթավորված նպատակ, որը համապատասխանում է ՈԱԾ-ի շրջանակներին, մուհի առաքելությանը և ծրագրի պոտենցիալ շահառուների պահանջներին:

1.1.2. Նվաճումների ապահովման արդյունավետ մեխանիզմներ և նպատակների վերանայում և հստակեցում:

1.2. Նպատակները պետք է ընդունելի լինեն ԿԾ-ն իրականացնողների կողմից, հրապարակվեն և հասանելի լինեն բոլոր շահագրգիռ կողմերի համար:

Չափանիշ 2. ԿԾ-ի բովանդակությունը

2.1. ԿԾ-ն պետք է ունենա հստակ ձևակերպված և փաստաթղթավորված վերջնարդյունքներ, որոնք համապատասխանում են ծրագրային նպատակներին:

2.2. Մագիստրոսական ծրագիրը պետք է ապահովի 120 ECTS կրեդիտ: Բակալավրի ծրագիրը պետք է ապահովի 240 ECTS կրեդիտ:

2.3. Ուսումնական պլանը և յուրաքանչյուր մոդուլ պետք է համապատասխանի ԿԾ-ի նպատակներին և ապահովի բոլոր շրջանավարտների կրթական վերջնարդյունքների առկայությունը:

2.4. ԿԾ-ի բոլոր խմբերը պետք է ապահովեն մասնագետի համապատասխան նախապատրաստվածություն, որով կապահովվի մասնագետների հետագա պատրաստման գործընթացը:

2.4.1. ԿԾ-ի յուրաքանչյուր առարկայախումբ պետք է ներառի առնվազն 15 կրեդիտ և դասընթացի խորացված ուսումնասիրության հնարավորություն:

2.4.2. ԿԾ-ի ընդհանուր խմբի մոդուլները պետք է նպաստեն ընդհանրական, միջանձնային կոմպետենցիաների յուրացմանը և հիմք հանդիսանան մասնագիտական առարկայախմբի դիսցիպլինների յուրացման համար:

2.4.3. Ճշգրիտ և բնագիտական առարկաների ուղղությամբ նախապատրաստումը պետք է հնարավորություն ընձեռի հետագայում ավելի խորը և համակողմանի կիրառելու յուրացված գիտելիքները մասնագիտական գործունեության մեջ:

2.5. Ընդհանուր մասնագիտական և հատուկ առարկայախումբը պետք է ապահովի մասնագետի պատրաստման համար պայմաններ, որոնք կնպաստեն նրա մասնագիտական գործունեության յուրացմանը, կազմակերպչական ընդունակությունների ի հայտ գալուն և կառավարչական հմտությունների ձևավորմանը:

2.5.1. Առարկայախմբի ծավալը պետք է կազմի առնվազն 30 կրեդիտ, որը պետք է ապահովի մասնագիտացումը ապահովող դասընթացների խոր ուսումնասիրություն:

2.5.2. Մանկավարժական խմբի առարկաների ուսումնասիրությունը պետք է համապատասխանի մանկավարժական գիտությունների արդի նվաճումներին և ապահովի այնպիսի հմտություններ, որոնք կիրառելի են գործունեության մեջ:

2.5.3. Մասնագիտական խմբի առարկաները պետք է նպաստեն ստեղծագործական մտածողության զարգացմանը, որոնք հնարավորություն կտան լուծելու գործնական խնդիրներ:

2.6. Գիտահետազոտական աշխատանքը պետք է ապահովի առնվազն 20 կրեդիտ:

2.7. ԿԾ-ի ավարտին շրջանավարտը պետք է ներկայացնի 24 կրեդիտ ապահովող ավարտական աշխատանք:

Չափանիշ 3 Ուսանողները և կրթական գործընթացը

3.1. Բակալավրիատի ուսանողները պետք է ամբողջությամբ յուրացնեն դասընթացը:

3.2. Ուսանողները պետք է ունենան բազային գիտելիքներ և նախապատրաստված լինեն կրթական ծրագրի յուրացման համար:

3.3. Ուսումնական գործընթացը պետք է ապահովի բոլոր ուսանողների կողմից հասանելի ուսումնական արդյունքներ: ԿԾ-ն պետք է ունենա հետադարձ կապ

ապահովող մոնիթորինգային մեխանիզմներ, որոնք միտված են նրա շարունակականությանը և բարելավմանը:

3.4. Ավարտական կուրսի ուսանողների համար պետք է ստեղծել հետազոտության համար անհրաժեշտ պայմաններ պրակտիկան լաբորատորիաներում, կրթական հաստատություններում և գործարաններում անցկացնելու համար:

3.5. Ակադեմիական շարժունությունը հնարավորություն է տալիս ուսանողներին ուսումնասիրելու մի շարք առարկաներ այլ համալսարաններում՝ երկրի ներսում / կամ արտասահմանում:

Չափանիշ 4. Պրոֆեսորադասախոսական անձնակազմ

4.1. Պրոֆեսորադասախոսական անձնակազմում պետք է ընդգրկվեն ԿԾ-ին անհրաժեշտ ոլորտների մասնագետներ:

4.2. Դասախոսները պետք է ունենան որակավորման համապատասխան մակարդակ.

4.2.1. Պրոֆեսորադասախոսական անձնակազմը պետք է ունենա համապատասխան բազային գիտելիքներ և պարբերաբար բարձրացնի իր որակավորումը լրացուցիչ կրթության և վերապատրաստման միջոցով:

4.2.2. Պրոֆեսորադասախոսական անձնակազմը պետք է ունենա փորձառություն համապատասխան ոլորտում, ինչպես նաև մասնակցություն գիտահետազոտական նախագծերում:

4.2.3. Պրոֆեսորադասախոսական անձնակազմը պետք է ընդգրկված լինի ինչպես ամբողջական ԿԾ-ի բարելավման աշխատանքներում, այնպես էլ նրա առանձին առարկաների մշակման և հետադարձ կապի ապահովման գործընթացներում:

4.2.4. Պրոֆեսորադասախոսական անձնակազմը պետք է մասնակցի մասնագիտական ծրագրերի և դրամաշնորհների իրականացման գործում:

4.3. ԿԾ-ն իրականացնող պրոֆեսորադասախոսական անձնակազմի ոչ պակաս քան 50% պետք է լինեն գիտությունների դոկտորներ և թեկնածուներ:

4.4. Պրոֆեսորադասախոսական անձնակազմը պետք է ակտիվ մասնակցություն ունենա գիտա-հետազոտական , գիտա-մեթոդական աշխատանքների կատարման գործում (գիտական կոնֆերանսների, գիտական հրապարակումների)՝ վերջին մեկ տարվա կտրվածքով:

4.5. Յուրաքանչյուր դասախոս պետք է իմանա և կարողանա ապացուցել իր առարկայի տեղը ուսումնական պլանում, նրա կապը նախորդ առարկաների հետ և գիտակցել տվյալ առարկայի դերը մասնագետի ձևավորման հարցում:

4.6. Պրոֆեսորադասախոսական անձնակազմի շարժունությունը չպետք է գերազանցի 40% -ը հավատարմագրման գործընթացում:

Չափանիշ 5. Մասնագիտական գործունեության նախապատրաստում

5.1. ԿԾ-ն պետք է ապահովի բոլոր ուսանողներին կրթական արդյունքներով, որոնք անհրաժեշտ են մասնագիտական գործունեության համար:

Ուսանողը պետք է.

5.2. ցուցաբերի հիմնարար գիտելիքներ և հմտություններ, որոնք ընկած են մասնագիտական գործունեության հիմքում:

5.3. Իրազեկ լինի մասնագիտական գործունեությանն առնչվող համընդհանուր գիտելիքին և բարեփոխումներին:

5.4. Կիրառի ստացած գիտելիքը իր առջև դրված խնդիրների սահմանման, ձևակերպման և լուծման համար՝ համապատասխան մեթոդների գործադրմամբ:

5.5. Կարողանա ընտրել և օգտագործել համապատասխան մասնագիտությանն առնչվող վերլուծական և համադրական մեթոդներ:

5.6. Կարողանա հայթայթել անհրաժեշտ գրականություն, տվյալների բազա և տեղեկատվական այլ աղբյուրներ:

5.7. Կարողանա պլանավորել և անցկացնել փորձը, մեկնաբանել տվյալները և հանգել եզրակացությունների:

5.8. Կարողանա ընտրել և օգտագործել համապատասխան սարքավորումներ:

5.9. Կարողանա համադրել տեսությունը, պրակտիկան և մեթոդները մասնագիտական նյութի վերլուծության ընթացքում:

5.10. Արդյունավետ աշխատել ինչպես ինքնուրույն, այնպես և խմբի մեջ:

5.11. Բավարար մակարդակով տիրապետի օտար լեզուների, որոնք հնարավորություն կստեղծեն աշխատելու միջազգային միջավայրում՝ հասկանալու մշակութային, լեզվական և սոցիալ-քաղաքական տարբերություններն ու տարբերակումները:

5.12. Հետևի մասնագիտական էթիկայի կանոններին, ինչպես նաև պատասխանատվություններին ու նորմերին:

5.13. Հասկանա գիտելիքի անհրաժեշտության աստիճանը և կարողանա սովորել ու բարձրացնել որակավորումը իր մասնագիտական գործունեության ողջ ընթացքում:

5.14. Բուհում պետք է իրականացվի ծրագրային գնահատման ամբողջական մեխանիզմ:

Չափանիշ 6. Նյութատեխնիկական բազա

6.1 Նյութական ապահովվածությունը պետք է լինի լիցենզավորված չափանիշերի սահմաններում:

6.2 Լսարանները, լաբորատորիաները և նրանց հագեցվածությունը պետք է լինեն ժամանակակից և համապատասխանեն ծրագրային նպատակներին:

6.3 Ուսանողները պետք է ունենան բավարար հնարավորություններ ինքնակրթվելու և հետազոտական աշխատանք կատարելու համար:

6.4 Մուհը պետք է անընդհատ համալրվի, կատարելագործվի և ընդլայնի նյութատեխնիկական բազան:

Չափանիշ 7. Տեղեկատվական ապահովվածություն

7.1 Տեղեկատվական ապահովվածությունը պետք է համապատասխանի ծրագրի նպատակներին:

7.2 Մուհը պետք է ունենա ԿԾ-ին համապատասխանող մասնագիտական գրադարան:

7.3 Ուսանողների և դասախոսների համար բուհը պետք է ապահովի համակարգչային լսարաններ՝ համացանցի և ներքին ցանցի առկայությամբ:

7.4 Մուհը պետք է ուսանողների և դասախոսական կազմի համար ստեղծի հնարավորություն տեղեկատվական ռեսուրսներից ազատ օգտվելու:

7.5 Մուհը պետք է անընդհատ վերագինվի, կատարելագործվի և ընդլայնի իր տեղեկատվական բազան:

Հավելված 1 ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ

ՎՊՀ-ի ռեկտոր

_____ Գ.Խաչատրյան

_____ 2014

ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

Ստուգման օբյեկտը		Ստուգման ժամանակա հատվածը Մկիզբը/ ավարտը	Աուդիտի անցկացման պատասխանատու
ստորաբաժանում	ՈԱ ստուգվող գործընթացները		

ՀԱՄԱՁԱՅՆԵՑՎԱԾ Է

Որակի ապահովման կենտրոնի ղեկավար՝ _____

Գործընթացի պատասխանատու՝ _____

Ստորաբաժանման պատասխանատու՝ _____

Հավելված 2 ՈՐԱԿԻ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏԻ ՊԼԱՆ

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ

ՎՊՀ-ի ղեկավար

_____ Գ.Խաչատրյան

_____ 2014

ՈՐԱԿԻ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏԻ ՊԼԱՆ

1. Աուդիտի անցկացման հիմքեր _____

Ծրագիր, հրաման

2. Ներքին աուդիտի տեսակը (պլանային, ոչ պլանային)

3 Աուդիտորների խմբի ղեկավարը _____

ԱԱՀ

4. Աուդիտի նպատակը

1

2

Աուդիտի չափանիշերը	Աուդիտի ծավալը		Աուդիտորներ	Մտուցվող ստորաբաժանումների ներկայացուցիչներ
	Աուդիտի ոլորտը (գործունեությունը, գործընթացը, ստորաբաժանումը)	Աուդիտի անցկացման ժամանակաշրջանը		

Հավելված 3 ԱՆՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

N__

		Աուդիտի N _____ Էջ _____
Ստորաբաժանում		Աուդիտորական խմբի ղեկավար՝ (ԱԱՀ)
Աուդիտոր՝ _____ (անուն, ազգանուն, հայրանուն)		Ստորաբաժանման ղեկավար (ԱԱՀ)
Տվյալներ անհամապատասխանության վերաբերյալ		
Չափանիշի բնութագիրը		
Անհամապատասխանության հակիրճ նկարագիրը Աուդիտոր _____		
Անհամապատասխանությունների վերացման պլանավորվող գործողությունները		Նշում իրականացման վերաբերյալ
Աուդիտորական խմբի կարծիքը անհամապատասխանության վերաբերյալ		
Անհամապատասխանության պատճառը		
Անհամապատասխանությունը հիմնավորող օբյեկտիվ տվյալներ		
Աուդիտոր՝ _____ 200...		
Նպատակահարմա՞ր են շտկողական /կանխարգելիչ գործողությունները		
<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	
Այո	Ոչ	
Ստորաբաժանման ղեկավար՝ _____		
(ԱԱՀ) ստորագրություն		
<< _____ >> _____		20...
Շտկողական /կանխարգելիչ գործողությունը իրականացված է		
Ստորաբաժանման ղեկավար՝ _____		
<< _____ >> _____		20...
Շտկողական /կանխարգելիչ գործողության իրականացումը		
Բավարար _____		
Անբավարար _____		
Աուդիտոր՝ _____ 20...		

Հրահանգներ հաշվետվության ձևի լրացման վերաբերյալ

Առողիտի հաշվետվողականության ձևերին են վերաբերում.

- ա) Ձ-1 – ինքնավերլուծության արդյունքների հիման վրա տրված նախնական գնահատականը,
- բ) Ձ-2 – ուսումնական պլանի վերլուծությունը,
- գ) Ձ-3 – կրթական փաստաթղթերի վերլուծությունը,
- դ) Ձ-4 – փորձագետի աշխատանքային թերթիկը,
- ե) Ձ-5 – կրթական գործընթացում որակի կառավարման գործընթացի իրականացման աստիճանը,
- զ) Ձ-6 – գործատուի աշխատանքային թերթիկը կրթական ծրագրի վերաբերյալ,
- է) Ձ-7 – ծրագրի գնահատման ընդհանրական ձևը:

Ուշադրություն

Ձ-3, Ձ-5 և Ձ-7 ձևաթղթերը լրացվում են մեկ օրինակով քննարկման արդյունքում և ստորագրվում են խմբի բոլոր անդամների կողմից:

Ձ-6 ձևը լրացվում է միայն գործատուի կողմից:

Ձ-1, Ձ-2 և Ձ-4 ձևաթղթերը լրացվում են աշխատախմբի բոլոր մասնակիցների կողմից՝ ներառյալ ղեկավարին:

**ՉԱՓԱՆԻՇԵՐԻ ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ
(ԻՆՔՆԱԳՆԱՀԱՏՄԱՆ ԶԵԿՈՒՅՑԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ)**

Ձև - 1

(լրացվում և ստորագրվում է հանձնախմբի յուրաքանչյուր անդամի կողմից)

ԿԾ _____

Ստորագրածանում՝ _____

Փորձագետ՝ _____

Լրացման ամսաթիվ _____

ԿԾ-ի առուղիտի չափանիշերը	գնահատում
Չափանիշ 1. ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ	
Չափանիշ 2. ԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԸ	
Չափանիշ 3. ԴԱՍԱՎԱՆԴՈՒՄԸ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅՈՒՆԸ	
Չափանիշ 4. ՈՒՍՈՒՄՆԱՌՈՂՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ	
Չափանիշ 5. ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԵՎ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ	
Չափանիշ 6. ԿՐԹԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐ	
Չափանիշ 7. ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ	

Գնահատման համակարգը

- Չափանիշը իրականացված է լրիվ «+»
- Կան հակասական հարցեր «0»
- Մասնագիտական ծրագիրը ունի թույլ կողմեր «-1»
- Մասնագիտական ծրագիրը ունի թերություններ «-2»

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Ձև-2

(լրացվում է խմբի յուրաքանչյուր անդամի կողմից)

ՄԿԾ _____

Առուդիտի խմբի անդամ՝ _____
(ԱԱՀ)

Լրացման ամսաթիվը _____

Աղյուսակ 1

Ուսումնական պլանի վորլուծությունը ըստ առարկաների խմբերի

Առարկաների խումբ	Ծավալը, ECTS ¹ կրեդիտ			
	Ինքնավերլուծության նյութի հիման վրա	Այցի արդյունքների հիման վրա	Մինիմումը ըստ ՎՊՀ-ի կրթական ծրագրի ռազմավարության	
			Բակալավրի ծրագիր	Մագիստրատուրայի ծրագիր
Հիմնական բաղադրամաս, բնագիտական առարկաներ և մաթեմատիկա				
Մասնագիտական խորացված առարկաներ				
Ընդհանուր մասնագիտական և հատուկ առարկաներ				
Խորացված դասընթացներ				
Հումանիտար առարկաներ				
Սոցիալտնտեսական առարկաներ				
Մանկավարժական առարկաներ				
Այլ առարկաներ				
Ծրագրի ընդհանուր ծավալը				

ԿՐԹԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Ձև-3

(լրացվում և ստորագրվում է աուդիտի խմբի անդամների կողմից)

ՄԿԾ

Ներկայացնել կրթական ծրագրով ուսուցանվող 2<ուժեղ> և 2 <թույլ> ուսանողների փաստաթղթերը

Առարկաների ցանկը	Առարկաների Միջին միավորը					
	«Ուժեղ»		«Միջին»		«Թույլ»	
Միջին միավոր						
Բնական գիտություններ և մաթեմատիկա						
Ընդհանուր մասնագիտական և հատուկ առարկաներ						
Հումանիտար և սոցիալտնտեսական առարկաներ						
Այլ առարկաներ						

Աուդիտորական խմբի ղեկավար՝ _____ ԱԱՀ

Աուդիտի խմբի անդամներ՝ _____ ԱԱՀ

_____ ԱԱՀ

_____ ԱԱՀ

Ամսաթիվ՝ _____

ԱՌԻԴԻՏԻ ԽՄԲԻ ԱՆԴԱՄԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԹԵՐԹԻԿ

Ձև - 4

(լրացվում և ստորագրվում է առևտրային խմբի յուրաքանչյուր անդամի կողմից)

Մոտև՝ _____

Ծրագիր՝ _____

Փորձագետ՝ _____

(ԱԱՀ)

Լրացման
ամսաթիվը՝ _____

Օգտագործեք համապատասխան սյունակում ուղեցույցի հետևյալ նշանակումները

- « + » - «չափանիշի պահանջները բավարված են լրիվ»
- « 0 » - «հակասական ցուցանիշ»
- «-1 » - «թույլ կողմ»
- «-2 » - «բացակայություն»

